ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին և Լայպցիգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արտակ Ասատրյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին և Լայպցիգ), 2019 թվականի հունիսի 10-ից հունիսի 15-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագիր:

Գործուղման նպատակը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին և Լայպցիգ քաղաքներ կազմակերպված այցի շրջանակներում մասնակցություն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումների շուրջ Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական դատավարության ոլորտի փորձագետների հետ մասնագիտական քննարկումներին:

Քննարկված թեմաները՝ այցի շրջանակներում քննարկվել են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի հետագա բարելավման և կատարելագործման ուղղությունները, այդ թվում՝ մասնագիտական քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին՝ վարչական դատավարության սկզբունքները և դրանց ամրագրումը, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի ընդդատության հարցը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների, անգործության վիճարկումը վարչադատավարական կարգով, ապացույցները վարչական

դատավարությունում, վարչական մարմնի կողմից ապացույցներ ներկայացնելու պարտականության ապահովումը, դատական ծանուցումները, հայցատեսակների դասակարգումը, բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորության նախատեսումը, հայցի ապահովում կիրառելու հետ կապված հիմնահարցերը, գրավոր ընթացակարգի կիրառումը վերաքննության և վճռաբեկության փուլերում և այլն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունն այցելել է Գերմանիայի դաշնային վարչական դատարան, Բեռլին և Բրանդենբուրգ երկրամասերի վերաքննիչ վարչական դատարան, Բեռլին երկրամասի սահմանադրական դատարան, Գերմանիայի դաշնային նոտարական պալատ, Գերմանիայի արդարադատության և սպառողների շահերի պաշտպանության նախարարություն:

Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպել և քննարկումներ է ունեցել Գերմանիայի դաշնային վարչական դատարանի նախագահ դոկտոր, պրոֆեսոր Կլաուս Ռեններթի, Սահմանադրական դատարանի դատավոր, Բեռլին և Բրանդենբուրգ երկրամասերի վերաքննիչ վարչական դատարանի պաշտոնաթող նախագահ Յուրգեն Քիփի, Գերմանիայի Դաշնային նոտարական պալատի պաշտոնաթող փոխնախագահ Ռիխարդ Բոկի, Երկրակամասային դատարանի դատավոր, Գերմանիայի արդարադատության և սպառողների շահերի պաշտպանության նախարարության միջազգային իրավական համագործակցության բաժնի խորհրդական Ուտա Վինթերշտայնի հետ:

Վարչական դատավարության կատարելագործմանն ուղղված մասնագիտական քննարկումները կայացել են Գերմանիայի վարչական դաշնային դատարանի դատավոր, պալատի նախագահ, դոկտոր, պրոֆեսոր Ռյուդիգեր Ռուբելի, Հեսեն երկրամասի Գերագույն վարչական դատարանի պաշտոնաթող նախագահ Վոլֆգանգ Ռայմերսի և Գերմանիայի արդարադատության և սպառողների շահերի պաշտպանության նախարարության ֆինանսական և սոցիալական

արդարադատության բաժնի խորհրդական, դատախազ Թեոդորոս Մավրիդիսի հետ:

Հայկական պատվիրակությունը մասնակցել է նաև Բեռլին և Բրանդենբուրգ երկրամասերի վերաքննիչ վարչական դատարանի 1-ին պալատի երկու դատական նիստերի:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Արտակ Ասատրյան

20.06.2019թ.

X _____